



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. դեկտեմբերին /վերլուծություն/

2005թ. դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 10659 գործարքներ, որոնց քանակը 2005թ. նոյեմբերի և 2004թ. դեկտեմբերի համեմատ աճել է 9.2%-ով:

2005թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3807 օտարման գործարքների 87.9%-ը կազմել են առուվաճառքները, 11.7%-ը՝ նվիրատվությունները և

0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 39.5%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. դեկտեմբերին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2004թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 8.7%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ՝ 6.1%-ով: 2005թ. դեկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.7%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ. դեկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.0%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ՝ 7.1%-ով:

2005թ. դեկտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

/1ԱՄՆ դոլարը 2005թ. դեկտեմբերին համարժեք է 449.4դրամին/

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. դեկտեմբերին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
		դեկտեմբեր 2004թ	դեկտեմբեր 2005թ.	նոյեմբեր 2005թ.
Կենտրոն	157300.0-435900.0	246900.0	337300.0	330300.0
Արաբկիր	112350.0-314600.0	198400.0	266600.0	264600.0
Քանաքեռ-Զեյթուն	89900.0-224700.0	121500.0	159900.0	161000.0
Նոր-Նորք	89900.0-188700.0	108200.0	152700.0	154800.0
Ավան	80900.0-157300.0	102400.0	134800.0	136300.0
Էրեբունի	71900.0-179800.0	97000.0	133400.0	134600.0
Շենգավիթ	71900.0-202200.0	117000.0	163700.0	165500.0
Դավթաշեն	89900.0-202200.0	123800.0	166200.0	168100.0
Աջափնյակ	89900.0-202200.0	114200.0	153900.0	155500.0
Մալաթիա-Սեբաստիա	89900.0-202200.0	112200.0	150000.0	151000.0
Նուբարաշեն	53900.0-112350.0	46400.0	92200.0	89600.0
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	53900.0-435900.0	126200.0	173700.0	173800.0

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. դեկտեմբերին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների ամսեկան էական փոփոխություններ չկան:

2005թ. դեկտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 446 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 2.0%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ՝ 4.9%-ով:

2005թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. դեկտեմբերին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
			դեկտեմբեր 2004թ.	դեկտեմբեր 2005թ.	նոյեմբեր 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	36400.0-72700.0	35800.0	50300.0	50600.0
	Ապարան	13600.0-27300.0	19100.0	23600.0	23600.0
	Թալին	11400.0-25000.0	15800.0	21700.0	21900.0
Արարատ	Արտաշատ	25000.0-50000.0	29500.0	40800.0	40700.0
	Մասիս	36400.0-68200.0	31200.0	51600.0	52100.0
	Վեդի	22700.0-45400.0	20900.0	34200.0	34400.0
	Արարատ	20400.0-45400.0	21200.0	37100.0	37500.0
Արմավիր	Վաղարշապատ	50000.0-95400.0	54200.0	74200.0	75500.0
	Արմավիր	27300.0-59100.0	33100.0	44400.0	45200.0
	Մեծամոր	18200.0-36400.0	16000.0	25300.0	25500.0
Գեղարքունիք	Սևան	18200.0-40900.0	18000.0	30100.0	30600.0
	Գավառ	13600.0-29500.0	16600.0	22400.0	22800.0
	Մարտունի	22700.0-68200.0	17800.0	36000.0	36600.0
	Վարդենիս	9100.0-25000.0	8600.0	19200.0	19600.0
	Ճամբարակ	5900.0-20400.0	8800.0	10700.0	10900.0
Լոռի	Վանաձոր	27300.0-47700.0	32600.0	42000.0	42300.0
	Ստեփանավան	15900.0-29500.0	18000.0	22800.0	23100.0
	Սպիտակ	18200.0-45400.0	23100.0	26700.0	27200.0
	Այվերդի	9100.0-22700.0	12900.0	18100.0	18400.0
	Տաշիր	11400.0-25000.0	12400.0	19800.0	20200.0
	Թումանյան	4100.0-11400.0	5000.0	5200.0	5300.0
	Շամլուղ	2300.0-8400.0	2800.0	2700.0	2800.0
	Ախթալա	6800.0-16100.0	10500.0	10300.0	10500.0
Կոտայք	Արովյան	45400.0-90900.0	54700.0	77500.0	78500.0
	Նոր Հաճն	40900.0-63600.0	39700.0	56400.0	56900.0
	Բյուրեղավան	22700.0-50000.0	24600.0	37000.0	37400.0
	Եղվարդ	31800.0-59100.0	28100.0	47900.0	48300.0
	Հրազդան	20400.0-40900.0	24600.0	30200.0	27900.0
	Ծաղկաձոր	18200.0-68200.0	45500.0	56700.0	57700.0
	Չարենցավան	25000.0-38600.0	22300.0	35400.0	36100.0
Շիրակ	Գյումրի	27300.0-54500.0	38200.0	43800.0	42200.0
	Արթինկ	15900.0-31800.0	15300.0	25400.0	25800.0
	Սարայիկ	8200.0-31800.0	13800.0	21600.0	21900.0
Սյունիք	Գորիս	20400.0-59100.0	20300.0	45000.0	45700.0
	Կապան	22700.0-36400.0	17000.0	31800.0	32400.0
	Սիսիան	18200.0-40900.0	18400.0	28000.0	28600.0
	Մեղրի	13600.0-34100.0	12700.0	23500.0	23700.0
	Ագարակ	9100.0-27300.0	12300.0	17600.0	18000.0
	Քաջարան	9100.0-22700.0	9700.0	17000.0	17300.0
	Դաստակերտ	4500.0-11400.0	6600.0	6300.0	6500.0
Վայոց Ձոր	Վայք	13600.0-36400.0	21300.0	30600.0	30500.0
	Եղեգնաձոր	25000.0-59100.0	28100.0	43000.0	42900.0
	Ջերմուկ	36400.0-81800.0	31000.0	46200.0	46600.0
Տավուշ	Դիլիջան	18200.0-50000.0	22900.0	34200.0	34400.0
	Իջևան	27300.0-72700.0	28900.0	38700.0	39400.0
	Բերդ	18200.0-45400.0	18200.0	25700.0	26200.0
	Նոյեմբերյան	9100.0-22700.0	13500.0	14200.0	14400.0

2005թ. դեկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների ամսական էական փոփոխություններ չկան:

2005թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 520 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 112, մյուս մարզերում միասին վերցրած՝ 408: 2004թ. դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 18.2%-ով, ընդ որում Երևան քաղաքում 20.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 17.6%-ով: 2005թ. նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 6.6%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 9.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 5.7%-ով:

2005թ. դեկտեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. դեկտեմբերին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
		դեկտեմբեր 2004թ.	դեկտեմբեր 2005թ.	նոյեմբեր 2005թ.
Կենտրոն	136300.0-908800.0	248000.0	344300.0	345000.0
Արաբկիր	90900.0-454400.0	199400.0	274700.0	276400.0
Քանաքեռ-Զեյթուն	68200.0-272600.0	122300.0	163900.0	164700.0
Նորք-Մարաշ	90900.0-454400.0	170400.0	181000.0	184100.0
Ավան	90900.0-363500.0	103000.0	139000.0	140700.0
Էրեբունի	68200.0-227200.0	98000.0	138800.0	140600.0
Շենգավիթ	68200.0-204500.0	117900.0	170600.0	170600.0
Դավթաշեն	90900.0-409000.0	124300.0	171200.0	171500.0
Աջափնյակ	68200.0-272600.0	114900.0	156800.0	159100.0
Մալաթիա-Սեբաստիա	68200.0-409000.0	113600.0	154200.0	154200.0
Նուբարաշեն	36400.0-113600.0	47850.0	93100.0	90100.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	36400.0-908800.0	132700.0	180700.0	181500.0

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. դեկտեմբերին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ ամսական էական փոփոխություններ չկան:

2005թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. դեկտեմբերին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
			դեկտեմբեր 2004թ.	դեկտեմբեր 2005թ.	նոյեմբեր 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	27300.0-81800.0	42500.0	51700.0	51900.0

	Ապարան	13600.0-36400.0	19300.0	24900.0	24800.0
	Թալին	13600.0-36400.0	17100.0	23500.0	23500.0
Արարատ	Արտաշատ	22700.0-50000.0	30300.0	42100.0	41700.0
	Մասիս	22700.0-68200.0	32000.0	52800.0	53300.0
	Վեդի	13600.0-40900.0	24000.0	35400.0	35400.0
	Արարատ	13600.0-45400.0	22500.0	38500.0	39000.0
Արմավիր	Վաղարշապատ	36400.0-81800.0	55700.0	75600.0	76700.0
	Արմավիր	22700.0-59100.0	34600.0	46300.0	46600.0
Գեղարքունիք	Մևան	9100.0-40900.0	20600.0	38100.0	34200.0
	Գավառ	9100.0-36400.0	19400.0	24100.0	24600.0
	Մարտունի	13600.0-45400.0	20000.0	38500.0	39200.0
	Վարդենիս	9100.0-31800.0	10700.0	21400.0	21800.0
	Ճամբարակ	4500.0-22700.0	10900.0	12500.0	12800.0
Լոռի	Վանաձոր	22700.0-50000.0	34500.0	43400.0	43400.0
	Ստեփանավան	13600.0-36400.0	24500.0	26700.0	27200.0
	Սպիտակ	13600.0-36400.0	24400.0	28500.0	29000.0
	Ալավերդի	9100.0-31800.0	14600.0	19900.0	19600.0
	Տաշիր	9100.0-31800.0	13900.0	21300.0	21500.0
	Թումանյան	4500.0-18200.0	5600.0	6700.0	6700.0
	Շամլուղ	2300.0-13600.0	3900.0	4200.0	4200.0
	Ախթալա	9100.0-22700.0	10700.0	11900.0	12100.0
Կոտայք	Արուսյան	31800.0-90900.0	57400.0	81200.0	82400.0
	Նոր Հաճն	18200.0-68200.0	41500.0	57700.0	58100.0
	Բյուրեղավան	18200.0-45400.0	25100.0	38200.0	38300.0
	Եղվարդ	22700.0-63600.0	29100.0	49600.0	50300.0
	Հրազդան	18200.0-40900.0	25800.0	31500.0	30400.0
	Ծաղկաձոր	31800.0-68200.0	49000.0	58200.0	58700.0
	Չարենցավան	18200.0-45400.0	23100.0	37900.0	38600.0
Շիրակ	Գյումրի	27300.0-59100.0	44800.0	45500.0	44000.0
	Արթիկ	9100.0-40900.0	16300.0	27500.0	28000.0
	Մարալիկ	13600.0-36400.0	14400.0	23400.0	23800.0
Սյունիք	Գորիս	18200.0-59100.0	21500.0	46300.0	46700.0
	Կապան	13600.0-40900.0	17800.0	33800.0	34500.0
	Սիսիան	9100.0-40900.0	19600.0	29100.0	29600.0
	Մեղրի	13600.0-36400.0	14000.0	24600.0	24900.0
	Ագարակ	9100.0-36400.0	13800.0	19900.0	20300.0
	Դաստակերտ	4500.0-18200.0	7400.0	8600.0	8800.0
Վայոց Ձոր	Վայք	9100.0-36400.0	22900.0	31700.0	31600.0
	Եղեգնաձոր	18200.0-59100.0	28500.0	45000.0	45600.0
	Ջերմուկ	13600.0-40900.0	21500.0	31800.0	31400.0
Տավուշ	Դիլիջան	13600.0-45400.0	28300.0	35400.0	36100.0
	Իջևան	18200.0-45400.0	29500.0	40200.0	40600.0
	Բերդ	9100.0-40900.0	18700.0	26900.0	27100.0
	Նոյեմբերյան	9100.0-31800.0	15100.0	15400.0	15700.0

2005թ. դեկտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների, շինության 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ ամսեկան էական փոփոխություններ չկան:

Ընդհանուր առմամբ, 2005թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարվել են 1770.37 հա /այդ թվում՝ 36.15 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 1622.85 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 1743.07 հա

հողերի /այդ թվում՝ 35.59 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 1598.19 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 26.08 հա /այդ թվում՝ 0.18 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 24.19 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 1.21 հա /այդ թվում՝ 0.39 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակության գործարքներ, որից 0.47 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1124.36 հա, որից 1117.59 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2005թ. դեկտեմբերին մարզերում հողերի առուվաճառքի քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը.

ԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>						<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	50	6.28	18	18.73	0	0.00	54	5.83	17	4.56
Արագածոտն	12	63.26	1	0.12	2	0.02	38	27.37	40	3.79	2	0.28
Արարատ	14	40.54	50	5.80	6	0.22	110	41.37	78	8.31	2	0.05
Արմավիր	27	258.01	0	0.00	6	0.05	162	859.58	67	6.68	0	0.00
Գեղարքունիք	8	18.40	11	1.14	5	8.80	25	30.95	6	0.66	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	11	10.93	4	0.51	0	0.00
Կոտայք	17	24.00	29	2.91	6	35.76	79	44.21	132	13.03	4	0.54
Շիրակ	15	12.02	2	0.33	3	0.41	32	32.56	12	1.23	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	5	21.55	2	0.16	1	0.04
Վայոց Ձոր	9	106.60	0	0.00	2	0.01	3	0.63	4	0.45	0	0.00
Տավուշ	0	0.00	2	0.15	0	0.00	12	6.21	2	0.29	0	0.00
Ընդամենը	102	522.83	145	16.73	48	64.00	477	1075.36	401	40.94	26	5.47

2005թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են 1233 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2004թ. դեկտեմբերին՝ 1667/՝ այդ թվում 579-ը՝ գյուղատնտեսական նշանակության /1072/, 620-ը՝ բնակավայրերի /589/, 23-ը՝ արդյունաբերական օբյեկտների /6/ և 11-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

2005թ. դեկտեմբերին հողերի առուվաճառքներից 270 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով /2004թ. դեկտեմբերին՝ 588/, այդ թվում 44-ը՝ /5.58 հա/ Երևանում /37/, իսկ 226-ը՝ /532.60 հա/ մյուս մարզերում /551/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 97 միավորը /515.76 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական /2004թ. դեկտեմբերին՝ 378/, 133-ը՝ /14.16 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /177/, 26-ը՝ /2.72 հա/ հասարակական կառուցապատման /28/, 6-ը՝ /0.04 հա/ արդյունաբերական օբյեկտների /5/ և 8-ը՝ /5.50 հա/ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

2005թ. դեկտեմբերին, հանրապետությունում արձանագրված 579 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 97-ը իրականացվել են աճուրդների, 21-ը՝ դատարանի վճիռների և 5-ը՝ ուղղակի վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	9	61.62	74.2	166.3	121.3	24	14.93	359.5	6741.0	2049.3
Ապարան						6	4.15	89.9	764.0	301.1
Թալին	3	1.64	44.9	51.7	47.2	8	8.28	89.9	755.0	269.6
Ծաղկահովիտ								76.4	943.7	139.3
Արարատի մարզ										
Արտաշատ	10	4.04	617.9	1999.8	1359.4	43	15.57	332.6	5392.8	1105.5
Մասիս	2	6.50	188.7	465.1	328.1	14	6.42	179.8	6741.0	1402.1
Վեդի	2	30.0	397.7	402.2	400.0	52	18.58	202.2	4494.0	853.9
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	0.61	123.6	386.5	298.9	51	37.83	292.1	4044.6	701.1
Բաղրամյան	16	246.0	33.7	33.7	33.7	51	783.19	89.9	674.1	422.4
Վաղարշապատ	8	11.40	134.8	2006.6	629.2	52	30.36	440.4	8988.0	1186.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	0.34	188.7	494.3	301.1
Ճամբարակ	8	18.40	150.5	710.1	307.8	2	1.00	44.9	539.3	116.8
Մարտունի						8	2.57	44.9	1797.6	431.4
Սևան								44.9	449.4	173.0
Վարդենիս						9	11.64	27.0	530.3	179.8
Լոռու մարզ										
Այվերդի						2	0.56	161.8	2471.7	332.6
Գուգարք						1	1.83	224.7	2696.4	844.9
Սպիտակ								224.7	1483.0	467.4
Ստեփանավան						3	5.88	89.9	2247.0	292.1
Տաշիր						1	0.15	44.9	449.4	184.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	17	24.0	125.8	2269.5	660.6	38	12.26	269.6	11235.0	2790.8
Եղվարդ						36	25.97	170.8	11235.0	1927.9
Հրազդան						5	5.97	112.4	2696.4	665.1
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	1.20	1163.9	1163.9	1163.9	12	13.80	247.2	1685.3	368.5
Ամասիա						14	15.99	36.0	235.9	89.9
Անի						5	2.67	107.9	359.5	188.7
Աշոցք								44.9	112.4	94.4
Արթիկ	9	3.75	105.6	1321.2	548.3	1	0.09	62.9	1078.6	152.8
Սյունիքի մարզ										

Գորիս						1	2.40	89.9	719.0	287.6
Կապան								53.9	898.8	206.7
Մեղրի								179.8	1905.5	404.5
Սիսիան						4	19.15	44.9	674.1	166.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	84.0	33.7	33.7	33.7	3	0.63	116.8	2696.4	1159.5
Վայք	8	22.60	24.7	224.7	94.4			53.9	1528.0	449.4
Տավուշի մարզ										
Բերդ						2	0.94	44.9	898.8	305.6
Իջևան						4	1.76	238.2	1797.6	741.5
Նոյեմբերյան						2	1.76	44.9	3748.0	400.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. դեկտեմբերին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրված 442 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքներից 93-ը իրականացվել են աճուրդների, 4-ը՝ դատարանի վճիռների և 2-ը՝ ուղղակի վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	1220.0	175.3	175.3	175.3	38	33574.0	112.4	3595.2	1932.4
Ապարան								112.4	629.2	157.3
Թալին						2	4300.0	44.9	359.5	67.4
Ծաղկահովիտ								44.9	359.5	62.9
Արարատի մարզ										
Արտաշատ	15	14185.0	269.6	539.3	373.0	21	34458.0	134.8	2696.4	701.1
Մասիս						38	30252.0	134.8	8988.0	898.8
Վեդի	35	43830.0	47.2	413.4	388.7	19	18380.0	112.4	988.7	516.8
Արմավիրի մարզ										
Արմավիր						30	30749.0	134.8	2247.0	862.8
Բաղրամյան						2	2400.0	80.9	269.6	107.9
Վաղարշապատ						34	32918.0	134.8	4494.0	1190.9
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	550.0	134.8	898.8	301.1
Ճամբարակ	9	9000.0	85.4	85.4	85.4			44.9	134.8	71.9
Մարտունի	2	2400.0	58.4	67.4	62.9	1	810.0	89.9	449.4	157.3
Սևան						1	400.0	89.9	898.8	116.8
Վարդենիս						3	4840.0	44.9	224.7	71.9
Լոռու մարզ										
Ալավերդի						1	1940.0	67.4	269.6	94.4
Գուգարք						3	3180.0	67.4	2336.9	471.9

Սպիտակ								62.9	449.4	98.9
Ստեփանավան								44.9	269.6	71.9
Տաշիր								44.9	134.8	60.7
Կոտայքի մարզ										
Աբովյան	28	28450.0	276.4	820.2	638.1	64	58758.0	134.8	6741.0	1424.6
Եղվարդ						58	60023.0	134.8	6741.0	1577.4
Հրազդան						9	11040.0	134.8	8988.0	997.7
Շիրակի մարզ										
Ախուրյան						9	8754.8	112.4	1528.0	260.7
Ամասիա								44.9	134.8	60.7
Անի						3	3500.0	67.4	179.8	83.1
Աշոցք								40.4	134.8	53.9
Արթիկ	1	400.0	38.2	38.2	38.2			67.4	921.3	116.8
Սյունիքի մարզ										
Գորիս						1	590.0	67.4	539.3	197.7
Կապան						1	1000.0	67.4	629.2	184.3
Մեղրի								67.4	404.5	103.4
Սիսիան								67.4	404.5	116.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	3019.0	67.4	1123.5	211.2
Վայք								76.4	629.2	101.1
Տավուշի մարզ										
Բերդ								44.9	629.2	76.4
Իջևան	2	1500.0	289.9	289.9	289.9	1	1650.0	67.4	1348.2	310.1
Նոյեմբերյան								44.9	629.2	98.9

2005թ. դեկտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 16 գործարքներ 11.54 հա մակերեսով, ընդ որում 11-ը՝ Արարատի /2.82 հա/, 2-ը՝ Գեղարքունիքի /2.00 հա/ և 3-ը՝ Շիրակի /6.71 հա/ մարզերում:

2005թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 903 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.5%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 53.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն նվազել է 3.5%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ՝ 19.7%-ով:

2005թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 45 բնակարանների, 25 անհատական բնակելի տների, 202 հասարակական, 21 արտադրական նշանակության օբյեկտների, 4 ավտոտնակի և 606 միավոր հողերի վարձակալության գործարքներ:

2005թ. դեկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 276 վարձակալության գործարքների քանակը 2004թ. դեկտեմբերի համեմատ աճել է 7.3 անգամ, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ՝ 3.6 անգամ:

2005թ. դեկտեմբերին հանրապետությունում վարձակալվել են 1706.74 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 6.01 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 1577.73 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 7.64 հա՝ բնակավայրերի, 9.43 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 20.28 հա՝ հատուկ պահպանվող տարածքների, 78.65 հա՝ ջրային, 7.00 հա՝ էներգետիկայի օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 639.88 հա, որից 614.88

հա՝ գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ 0.03 հա, Տավուշի մարզում, որից 0.02 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 600.20 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2005թ. դեկտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	30	81.48
Արարատ	0	0.00	32	222.01
Արմավիր	0	0.00	7	116.19
Գեղարքունիք	14	515.20	29	99.68
Լոռի	0	0.00	3	78.50
Կոտայք	0	0.00	52	41.57
Շիրակ	1	85.00	20	243.92
Սյունիք	0	0.00	17	14.65
Վայոց Ձոր	0	0.00	13	79.50
Տավուշ	0	0.00	1	0.02
Ընդամենը	15	600.20	204	977.52

2005թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1106 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.4%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. դեկտեմբերի համեմատ աճել է 29.2%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ՝ 1.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.9%/, առանձնատների /15.5%/ և հողերի /23.8%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 516 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. դեկտեմբերի համեմատ աճել է 36.5%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ՝ 2.8%-ով:

2005թ. դեկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 258.37 հա /այդ թվում 15.93 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 208.46 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում 85.16 հա, որից 84.65 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ 0.04 հա բնակավայրերի հողեր, Շիրակի մարզում:

2005թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 10 և 5 ործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2004թ. դեկտեմբերի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 6.3%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ՝ 21.1%-ով: Մասնավորեցման

գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում, Գեղարքունիքում և Շիրակում՝ 20.0-ական%:

2005թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1789 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. դեկտեմբերի համեմատ աճել է 24.6%-ով, իսկ 2005թ. նոյեմբերի համեմատ՝ 26.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.8%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /59.1%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն